Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ 1600-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով ողջունում ենք Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակի առիթով ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախաձեռնությամբ և Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնակցությամբ ու օժանդակությամբ կազմակերպված միջազգային այս գիտաժողովը և Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները բերում կազմակերպիչներին և մասնակիցներին:

Մեծապես ուրախ ենք, որ դուք՝ անվանի մտավորականներ ու գիտնականներ, համախմբվել եք այսօր՝ ձեր ուսումնասիրությունները ներկայացնելու և մտածումները կիսելու համաշխարհային մշակույթի մեջ ուրույն տեղ ունեցող Մեսրոպյան գրերի և հայոց ազգային-եկեղեցական հարուստ ժառանգության վերաբերյալ:

Մեր պատմության հերոսական օրինաչափություններից է, որ հաճախ, անգամ օրհասական պայմաններում, հայ միտքը ծնունդ է տալիս հիասքանչ ստեղծագործությունների և արարումների, որոնք փրկարար զորությամբ հաղթական ուժ և ոգի են ներշնչում աստվածասեր մեր ժողովրդին: Այսպես նաև 16 դարեր առաջ շնորհազարդյալ Մեսրոպ Վարդապետի պայծառ ու հանճարագործ գյուտը աստվածային գիտության աղբյուրը բխեցրեց հայ ժողովրդի համար, և հայոց պատմության ոսկեդարը մտքի ու հոգու զարթոնքով սնեց և կրթեց քրիստոնասեր մեր ազգը Աստվածաշնչի իմաստությամբ: Մեր պատմության հետագա բոլոր դարերին հայի միտքն ու հոգին զորացել են Սահակ-Մեսրոպյան մշակույթի ավանդներով, և հարատևել է ժողովուրդը հայոց՝ սիրեցյալ Սուրբ Թարգմանչաց նվաճումներին նոր իրագործումներ հավելելով:

Հայոց գրերի արարման 1600-ամյա հոբելյանին նվիրված միջազգային գիտաժողովը հարգանքի և երախտագիտության տուրք է հայ ինքնությունն ու դպրությունը նվիրումով ու տքնանքով կերտած մեծանուն գործիչներին, ովքեր հարստացրեցին նաև համաշխարհային մշակույթը ինքնուրույն և թարգմանական բազմաժանր անգին գոհարներով: Մաշտոցյան գրերին նվիրված այսպիսի միջոցառումները նաև կոչ են հայորդյաց՝ անաղարտ պահելու ու առավել պերճացնելու սրբազան մեր ժառանգությունը:

Գիտաժողովի սիրելի մասնակիցներ, Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք վերստին բերում ձեզ ձեր գովարժան աշխատանքի համար և Տիրոջ սերն ու շնորհներն ենք բարեմաղթում ամենքիդ:

Աղոթքով առ Աստված հայցում ենք, որ Իր հանապազ օրհնության ներքո խաղաղ և անվրդով պահի Հայաստան աշխարհը, մեր ժողովրդին շնորհի մեսրոպանման նոր հանճարներ՝ի խնդիր հայոց ազգի նոր առաջընթացի և լույս գալիքի:

Թող Ամենակարողն Աստված խաղաղ երկինք, մշտապն բարգավաճում ու պայծառ ապագա պարգևի համայն մարդկությանը և թող հարանոր հաջողություններով պսակի սրեղծագործական ու գիտական ձեր օրհնյալ գործունեությունը: Բարի ընթացք գիպաժողովի աշխատանքներին:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
12 սեպտեմբերի 2005 թ.